ՊԵՏՀՐԱՏԻ ԵԺԱՆԳԻՆ ՐԱԴԱՐԱՆ

№ 22 № 22

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՎԻԹԸ

891.99
Թ-89

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1934

Ա 600
Ռ-89
16 NOV 2011

ՊԵՏՀՐԱՏԻ ԵԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 22 № 22

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՎԻԹԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1934

2 3 .04. 2013

Պատ. խմբագիր՝ Ցե. Չարենց
Տեխ. խմբագիր՝ Տ. Խաչվանդյան
Սրբագրիչներ՝ Սոս Հակոբյան, Վ. Մանուկյան

60953-67

Հրատար. № 2748, Գլավլիտ № 8311(բ), պատվեր № 2087, տիրաժ 5000. Պետհրատի տպարան, ստ. ֆ. 6 72×105, մեկ տպ. թերթում 102.40 տպ. նշ. հանձնված է արտադրության 5/X 1933 թ. ստորագրված է տպագրության 16/I 1934 թ.

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ

I

Առյուծ-Մըհերը, զարմով դյուցազուն
Քառասուն տարի իշխում եր Սասուն.
Իշխում եր ահեղ, ու նըրա որով
Հավքն ել չեր անցնում Սասմա սարերով։
Սասմա սարերից շատ ու շատ հեռու
Թընդում եր նըրա հըռչակն ահարկու,
Խոսվում եր իր վառքն, արարքն անվեհեր.
Հազար բերան եր — մի Առյուծ-Մըհեր։

II

Եսպես, ահավոր առյուծի նըման,
Սասմա սարերում նըստած եր իշխան
Քառասուն տարի։ Քառասուն տարում
«Ա՜խ» չեր քաշել նա դեռ իրեն որում.
Բայց հիմի, յերբ վոր յեկավ ծերացավ,
Են անահ սիրտը ներս սողաց մի ցավ։
Սկըսավ մըտածել դյուցազուն ծերը.
— Հասել են կյանքիս աշնան որերը,
Շուտով սև հողին կերթամ յես գերի,
Կանցնի ծըխի պես փառքը Մըհերի,
Կանցնեն և՛ անուն, և՛ սարսափ, և՛ ահ,
Իմ անտեր ու վորբ աշխարքի վերա

Վոտի կը կանգնեն հազար քաջ ու դև...
Մի ժառանգ չունեմ՝ իմ անցման յետև
Իմ թուրը կապի, Սասուն պահպանի...
Ու միտք եր անում հրսկան ծերունի։

III

Մի որ ել՝ են գորշ հոնքերը կլուսած
Ցերբ միտք եր անում, յերկնքից հանկարծ
Մի հուր-հրրեղեն հայտնըվեց քաջին,
Վոտները ամպոտ կանգնեց առաջին։
— Վողջույն մեծագոր Սասմա հրսկային.
Քու ձենը հասավ Աստծու դահին,
Ու շուտով Նա քեզ մի զավակ կըտա։
Բայց լավ իմանաս, լեռների արքա,
Վոր որը վոր քեզ ժառանգ ե տըվել,
Են որ կը մեռնեք քու կինն ել, դու ել։
— Իր կամքը լինի, ասավ Մըհերը.
Մենք մահինն ենք միշտ ու մահը մերը,
Բայց վոր աշխարքում ժառանգ ունենանք,
Մենք ել նըրանով անմեռ կը մընանք։
Հըրեշտակն ետեղ ցոլացավ նորից,
Ու ես յերջանիկ ավետման որից
Ցերբ ինը ամիս, ինը ժամն անցավ,
Առյուծ-Մըհերը զավակ ունեցավ։
Դավիթ անվանեց իրեն կորյունին,
Կանչեց իր ախպեր Ջենով Ոհանին,
Ցերկիրն ու վորդին ավանդեց նըրան,
Ու կինն ել, ինքն ել են որը մեռան։

IV

Ես դարում Մըսրը անհաղթ ու հզոր
Մըսրա-Մելիքն եր նըստած թագավոր։
Հենց վոր իմացավ՝ ել Մըհեր չը կա,
Վեր կացավ կըռվով Սասունի վըրա։
Ջենով Ոհանը ահից սարսափած՝
Թըշնամու առաջն յելավ գըլխաբաց,
Աղաչանք արավ, ընկավ վոտները.
— Դու յեղիր, ասավ, մեր գըլխի տերը,
Ու քու շըվաքում քանի վոր մենք կանք,
Քու ծառան լինենք, քու խարջը միշտ տանք,
Միայն մեր յերկիր քարուքանդ չանես
Ու քաղցըր աչքով մեզ մըտիկ անես։
— Չե, ասավ Մելիք, քու ամբողջ ազգով
Անց պիտի կենաս իմ թըրի տակով,
Վոր եգուց-ելոր, ինչ ել վոր անեմ,
Վոչ մի սասունցի թուր չառնի իմ դեմ։
Ու գընաց Ոհան՝ բոլոր-բովանդակ
Սասունը բերավ, քաշեց թըրի տակ.
Մենակ Դավիթը, ինչ արին-չարին,
Մոտ չեկավ դուշման Մելիքի թըրին։
Ցեկան քաշեցին՝ թե զոռով տանեն,
Թափ տըվավ, մարդկանց գըցեց դես ու դեն,
Փոքրիկ ճըկուլթը մի քարի առավ,
Ալառաժ քարից կըրակ դուրս թըռավ։
— Պետք ե սպանեմ ես փոքրիկ ծուռին,
Ասավ թագավորն իրեն մեծերին։
— Թագավոր, ասին, դու եսքան հըզոր,
Թըրիդ տակին ե վողջ Սասունն ետոր.

Ի՞նչ պետք է անի քեզ մի յերեխա,
Թեկուզ իր տեղով հենց կըրակ դառնա։
— Դուք գիտեք, ասավ Մըսրա թագավոր,
Բայց թե իմ գըլխին փորձանք գա մի որ,
Ես որը վըկա,
Սըրանից կը գա։

V

Ես վոր պատահեց, մեր Դավիթ հըսկան
Մի մանուկ եր դեռ յոթ-ութ տարեկան.
Մանուկ եմ ասում, բայց ենքան ուժեղ,
Վոր նըրա համար թե մարդ, — թե մըժեղ։
Բայց վայ խեղճ վորբին աշխարքի վըրա,
Թեկուզ Առյուծի կորյուն լինի նա։
Ձենով Ոհանին ուներ մի չար կի՞
Մին-յերկու լըռեց, մի որ եկ կարգին
Իրեն մարդու հետ սկըսավ կըռվել.
— Ցես մենակ հոգի, հազար ցավի տեր,
Ի՞նչ ես ուրիշի վորբին տուն բերել,
Նըստեցրել գըլխիս պարապ հացակեր...
Հոգեմ գլուխը... յես գերի հո չե՞մ՝
Ամենքի քեֆի յետևից թըռչեմ...
Մի կուռ կորցըրու, կարգիր մի բանի,
Գընա իր համար աշխատանք անի...
Ու հետն սկըսավ վողբալ ու կոծել,
Իր որը սըգալ, իր բախտն անիծել,
Թե անբախտ յեղավ աշխարքի մեջում,
Վոչ մի տեր ունի, վոչ մարդն ե խըղճում...
Գընաց Ոհանը յերեխի վոտի
Մի զույգ վոտնաման բերավ յերկաթի,

Ցերկաթի մի կոռ շալակին դըրած,
Ու արավ Սասմա քաղքի գառնարած։

VI

Քըշեց գառները մեր հովիվ հըսկան,
Ցելավ Սասունի սարերն աննըման.
«Ե՜յ ջան, սարեր,
Սասման սարեր...»
Վոր կանչեց, նըրա ձենից ահավոր
Դըղորդ-դըմբդըմբոցն ընկավ սար ու ձոր,
Վայրի գազաններ բըներից փախան,
Քարեքար ընկան, դատարկուն յեղան։
Դավիթը ընկավ նըրանց յետևից,
Վորին մի սարից, վորին մի ձորից —
Աղվես, նապաստակ, գել, յեղնիկ բըռնեց,
Հավաքեց, բերավ, գառներին խառնեց,
Իրիկվան քըշեց վողջ Սասմա քաղաք։
Կաղկանձ ու վոռնոց, աղմուկ, աղաղակ...
Քաղքըցիք հանկարծ մին եկ են տեսան՝
Գալիս են հըրես անհամար գազան.
«Վայ, հարայ փախեք...»
Մեծեր, երեխեք
Սըրտաճաք յեղած,
Գործները թողած,
Վորը տուն ընկավ, վորը ժամ, խանութ,
Ու ամուր փակեց դուռն ու լուսամուտ։
Դավիթը յեկավ, կանգնեց մեյդանում.
— Վահ, ես մարդիկը ի՞նչ վաղ են քընում.
Հե՜յ ուլատեր, հե՜յ գառնատեր,
Ցելեք, շուտով բացեք դըռներ.

Ով մինն ուներ — տասն եմ բերել,
Ով տասն ուներ — քըսանն արել...
Շուտով յելեք, յելեք, տարեք,
Ձեր գառն ու ուլ դոմերն արեք։
Տեսավ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում,
Ինքն էլ մեկնըվեց քաղքի մեյդանում,
Գըլուխը դըրավ մի քարի՝ մընաց
Ու մուշ-մուշ քընեց մինչև լուսաբաց։
Լուսին իշխաններ յելան միասին,
Գընացին Ձենով Ոհանին ասին.
— Տո Ձենով Ոհան, տո մահի տարած,
Ես խենթը բերիր, արիր գառնարած,
Վոչ գառն է ջոկում, վոչ դեն ու աղվես,
Գաղանով լըցրեց մեր քաղաքն եսպես.
Աստված կըսիրես՝ դիր ուրիշ բանի,
Թե չե ես խալխին լեղաճաք կանի։

VII

Ցելավ Ոհանը, Դավթի մոտ գընաց.
— Հորեղբայր Ոհան, հեռու յեկ, կամաց,
Ուլեր կըփախչեն։ — Մին էլ ենտեղից
Մի բոզ նապաստակ, ականջները ցից,
Խրտնեց ու ահից դուրս պրծավ հանկարծ։
Դավիթն ել. յելավ, յետևից ընկած
Են սարը քըշեց, յետ բերավ ես ձոր,
Բերավ, ուլերին խառնեց նորից նոր։
— Ո՞ֆ, ինչ դըժար է, հորեղբայր Ոհան.
Աստված ոխնել է են սև-սև ուլեր,
Ամա բոզալուկ ես ուլեր, վոր կան,
Փախչում են, ցըրվում վողջ սարերն ի վեր.

Ենքան եմ յերեկ վազել, չարչարվել,
Մինչև հավաքել ու տուն եմ բերել...
Նայեց Ոհանը, վոր Դավթի հագին
Վոտնաման չի յել մընացել կարգին,
Մահակն է մաշվել, մինչ բուռն է հասել,
Մի որվա միջում ենքան է վազել։
— Դավիթ ջան, ասավ, չեմ թողնի եսպես,
Բոզալուկ ուլեր չարչարում են քեզ.
Եգուց նախիրը կըտանես արոտ։
Ասավ Ոհանը ու մյուս առավոտ
Գընաց, նորից նոր մեր Դավթի վոտի
Մի ջուխտ նոր տըրեխ բերավ յերկաթի,
Յերկաթի մի կոռ հարյուր լըդրական
Ու շինեց Սասմա քաղքի նախրապան։

VIII

Քըշեց նախիրը մեր նախրորդ հըսկան,
Ցելավ Սասունի սարերն աննըման։
— «Ե՛լ, ջան սարեր,
Սասման սարեր,
Ի՞նչ անուշ է
Ձեր լանջն ի վեր...»
Վոր կանչեց, նըրա ձենից ահավոր
Դըղորդ-դըմբդըմբոցն ընկավ սար ու ձոր։
Վայրի գաղաններ բընեերից փախան,
Քարեքար ընկան, դատարկուն յեղան։
Դավիթն ել. ընկավ նրանց յետևից,
Վորին մի սարից, վորին մի ձորից,
Գել, ինձ, առյուծ, արջ, վագրը բըռնեց,
Հավաքեց, բերավ, իր նախրին խառնեց

Ու առաջն արավ դեպ Սասմա քաղաք։
Վոռնոց, մըռընչյուն, աղմուկ, աղաղակ...
Վախկոտ քաղքըցիք մին եվ ինչ տեսան,
Հենց քաղքի վերա անհամար զազան...
— «Վայ, հարայ, փախեք...»
Մեծեր, երեխեք
Սըրտաճաք յեղած,
Գործնները թողած
Փախան, ներս ընկան տուն, ժամ կամ խանութ,
Ամուր փակեցին դուռն ու լուսամուտ։
Դավիթը յեկավ կանգնեց մեյդանում.
— Վահ, ես քաղքըցիք ինչ վաղ են քընում։
Հե՛յ կովատեր, հե՛յ գոմշատեր,
Ցելե՛ք, շուտով բացեք դըռներ,
Ով մինն ուներ — տասն եմ բերել,
Ով տասն ուներ — քըսանն արել։
Շուտով յելե՛ք, յեկե՛ք, տարե՛ք,
Ձեր յեղն ու կով գոմերն արեք։
Տեսավ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում,
Ինքն եվ մեկնըվեց քաղքի մեյդանում,
Գըլուխը դըրավ մի քարի, մընաց,
Ու մուշ-մուշ քընեց մինչև լուսաբաց։
Լուսին խշխաններ յելան միասին,
Գընացին Ջենով Ոհանին ասին.
— Ամա՛ն, քեզ մատաղ, այ Ոհան ախպեր,
Մեր յեղն ու մեր կով թող մընան անտեր,
Միայն սրանից ազատ արա մեզ։
Վոչ արջն ե ջոկում, վոչ գոմեշն ու յեզ,
Մի որ ես քաղքին փորձանք կըբերի,
Արջերոց կանի, կըտա կավերի։

IX

Դավիթ չըդառավ, մի կըրակ դառավ։
Ճարը կըտըրված՝ Ոհանը բերավ
Նետ-աղեղ շինեց ու տըվավ իրեն՝
Գընա, վորս անի սարերի վերեն։
Դավիթ նետ-աղեղն առավ Ոհանից,
Հեռացավ Սասմա քաղքի սահմանից
Ու դառավ վորսկան։ Գնաց, մի կորկում
Լոր եր սպանում, ճնճղուկ եր զարկում,
Մըթանը գընում իրեն հոր ծանոթ
Աղքատ, անվորդի մի ծեր կընկա մոտ,
Վիշապի նըման, յերկար, անագին
Մեկնըվում, քընում կըրակի կողքին։
Մի որ եվ, յերբ վոր իր վորսից դարձավ,
Պառավը վերեն սաստիկ բարկացավ.
— Վայ Դավիթ, ասավ, մահըս տանի քեզ,
Դու պետք ե են հոր զավակը լինես։
Ձեռից ու վոտից ընկած մի ծեր կին —
Ցես եմ ու են արտն Աստծու տակին,
Ինչու՞ յես գընում, տափում, տըրորում,
Իմ ամբողջ տարվան ապրուստը կըտրում։
Թե վորսկան ես դու — նետ-աղեղըդ առ,
Ծըծմակա գըլխից մինչև Սեղանսար
Քու հերը ձեռին մի աշխարհ ուներ,
Վորսով մեջը լի վորսի սար ուներ.
Ցեղնիկ կա ենտեղ, այծյամ ու պախրա.
Կարող ես — գընա, ենտեղ վորս արա։
— Ի՞նչ ես, այ պառավ, եվ ինձ անիծում.
Ցես ջահիլ եմ դեռ, յես նոր եմ լըսում։

Վիրտեղ է հապա սարը մեր վորսի...
— Գընա, հորեղբայրդ — Ոհանը կասի։

X

Հորեղբոր շեմքում մյուս որը ծեգին
Դավիթը կանգնեց աղեղը ձեռքին։
— Հորեղբայր Ոհան, ինչու չես ասել՝
Իմ հերը վորսի սար է ունեցել,
Այծյամ կա ենտեղ, յեղջերու, կըխտար.
Վեր կաց, հորեղբայր, տար ինձ վորսասար։
— Վա՛յ, կանչեց Ոհան, եդ քու խոսքը չեր,
Եդ ով քեզ ասավ, լեզուն պապանձվեր։
Են սարը, վորդի՛, գընաց մեր ձեռից,
Են սարի վորսն էլ գընաց են սարից,
Էլ չկան այծյամ, յեղջերու, կըխտար։
Քանի լուսեղեն քու հերը դեռ կար,
(Ե՞լ գիդի որեր — վիրտեղ ենք կորել)
Ցես շատ եմ ենտեղ վորսի մես կերել...
Քու հերը մեռավ, Աստված խըռովեց,
Մըսրա թագավոր զորքեր ժողովեց,
Ցեկավ, մեր յերկիր քարուքանդ արավ,
Ես սարի վորսն էլ թալանեց, տարավ.
Ցեղնիկը գընաց, յեղջերուն գընաց...
Մեր գիրն էլ հալբաթ եսպես եր գրած։
Անցել է, վորդի, քու բանին գընա,
Մըսրա թագավոր ձենըդ կիմանա...
— Մըսրա թագավոր ինձ ինչ կանի վոր...
Ցես ինչ եմ հարցնում Մըսրա թագավոր.
Մըսրա թագավոր թող Մըսրը կենա,
Իմ հոր սարերում ինչ գործ ունի նա...

Վեր կաց, հորեղբայր, նետ-աղեղդ առ,
Կապարձրդ կապիր, գընանք վորսասար։
Ցելավ Ոհանը ճարը կըտրըված,
Գընացին տեսան՝ էլ ինչ վորսասար.
Անտառը ջարդած, պարիսպն ավերած,
Բուրգերը արած գետնին հավասար...

XI

Գիշերը հասավ, մընացին ենտեղ։
Ձենով Ոհանն եր, իր նետն ու աղեղ
Դըրավ գլխի տակ, հանգիստ խըռընփաց.
Դավիթը մընաց մըտքի ծոցը ընկած։
Մին էլ նկատեց, վոր մութը հեռվում
Մի թեժ, փայլփլուն կըրակ է վառվում։
Են լուսը բըռնած՝
Վեր կացավ, գընաց,
Գընաց ու գընաց, բարձրացավ մի սար,
Բարձրացավ, տեսավ մի մեծ մարմար քար
Կիսից պատըռված,
Ու միջից վառված
Բըխում է լուսը պարդ, քուլա-քուլա,
Բարձրանում, իջնում յետ քարի վըրա։
Վար իջավ Դավիթ ենտեղից կըրկին,
Վար իջավ, կանչեց Ձենով Ոհանին։
— Ցե՛ լ, հորեղբայր, քանի՞ քընես,
Ցե՛ լ, են պայծառ լուսը մի տես։
Լուս է իջել բարձրը սարին,
Բարձրը սարին, մարմար քարին։
Ցե՛ լ, հորեղբայր, անուշ քընից.
Են ինչ լուս է բըխում քարից։

Ցելավ, խաչ քաշեց Ոհանն յերեսին.
— Ե՛յ, վորդի, ասավ, մեռնեմ իր լուսին,
Են մեր Մարութա սարն է զորավոր։
Են լուսի տեղը կանգնած եր մի որ
Սասմա ապավեն, Սասմա պահապան
Մեր, սուրբ Տիրամոր վանքը Զարխափան։
Մըշտական, յերբ վոր կըռիվ եր գընում,
Ենտեղ եր քու հերն իր աղոթքն անում։
Քու հերը մեռավ, Աստված խըռովեց,
Մըսրա թագավոր զորքեր ժողովեց,
Մեր վանքն ել յեկավ քանդեց են սարում,
Բայց դեռ սեղանից լուս է բարձրանում...

XII

Դավիթը ես ել յերբ վոր իմացավ,
— Անուշ հորեղբայր, հորեղբայր, ասավ,
Վորբ եմ ու անտեր աշխարքի վըրա,
Հեր չունեմ՝ դու ինձ հերություն արա։
Ել չեմ իջնի յես Մարութա սարից,
Մինչև չըշինեմ մեր վանքը նորից։
Քեզանից կուզեմ հինգհարյուր վարպետ,
Հինգհազար բանվոր մըշակ նըրանց հետ,
Վոր գան՝ ես շաբաթ կանգնեն ու բանեն,
Առաջվան կարգով մեր վանքը շինեն։
Գընաց Ոհանը ու բերավ իր հետ
Հինգ հազար բանվոր, հինգհարյուր վարպետ։
Վարպետ ու բանվոր յեկան կանգնեցին,
Զըրբ՛խկ հա թըրբ՛խկ, նորից շինեցին,
Առաջվան կարգով, փառքով փառավոր
Բարձրը Մարութա վանքը Տիրամոր։

Ցըրված միաբանք յեռ նորից յեկան,
Նորից թընդացին աղոթք, շարական.
Ու յերբ շեն արավ հոր վանքը նորից,
Ցած իջավ Դավիթ Մարութա սարից։

XIII

Համբավը տարան Մըսրա Մելիքին.
— Հապա չես ասիլ՝ Դավիթը կրկին
Հոր վանքը շինել, իշխան է դառել,
Դու ոխտը տարվան խարջը չես առել
Մելիք զայրացավ.
— Գընացեք, ասավ,
Բաղին, Կողբաղին,
Սյուդին, Զարխաղին,
Սասմա քար ու հող տակն ու վեր արեք,
Իմ ոխտը տարվան խարաջը բերեք։
Քառասուն կուլս աղջիկ բերեք արմաղան,
Քառասուն կարճ կընիկ, վոր յերկանք աղան,
Քառասունն ել յերկար, վոր ուղտեր բառնան,
Իմ տանն ու դրան զարավաշ դառնան։
Ու Կողբաղին առավ զորքեր.
— Գըլխիս վըրա, ասավ, իմ տեր.
Գընամ հիմի քանդեմ Սասուն,
Կանայք բերեմ քառասուն-քառասուն,
Քառասուն բեռնով դեղին վոսկի,
Տեղը ջընջեմ Հայոց աղգի։
Ասավ, Մըսրա աղջիկ ու կին
Պար բռնեցին ու յերգեցին.
— Մեր Կողբաղին գընաց Սասուն,
Կանայք բերի քառասուն-քառասուն,

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՈ-Арм.ССР

Քառասուն բեռով վոսկի բերի,
Մեր ճակատին շարան շարի,
Կարմիր կովեր բերի կըթան՝
Դարնան շինենք յեղ ու չորթան։
Ջան Կողբադին, քաջ Կողբադին,
Սասմա Դավթին զարկեց գետին։
Ու Կողբադին փըքված, ուռած,
— Շնորհակալ եմ, քույրեր, գոռաց
Մինչև գալըս դեռ համբերեք,
Են ժամանակ պիտի պարեք...

XIV

Եսպես յերգով,
Զոռով-զորքով
Գոռ Կողբադին մըտավ Սասուն.
Ոհան լըսեց՝ կապվեց լեզուն։
Աղ ու հացով,
Լաց ու թացով
Առաջն յելավ,
Խընդիրք արավ.
— Ինչ վոր կուզես՝ առ, տար, ամեն.
Վարդ աղջիկներ կանայք Սասման,
Դառը դաղած գեղին վոսկին,
Միայն թե գըթա մեր խեղճ աղգին,
Մի կոտորիր, մի տար մահու,
Վերև՝ Աստված, ներքևը՝ դու...
Ասավ, բերավ շարան-շարան
Վարդ աղջիկներ, կանայք Սասման,
Ու Կողբադին կանգնեց, ջոկեց,
Մարագն արավ, դուռը փակեց։

Քառասուն կույս աղջիկ, սիրուն արմաղան,
Քառասուն կարճ կընիկ, վոր յերկանք աղան,
Քառասուն-եվ յերկար, վոր ուղտեր բառնան,
Մըսրա Մելիքին զարավաշ դառնան։
Դեղ-դեղ կիտեց գեղին վոսկին.
Սև սուգ կալավ Հայոց աղգին։

XV

Հե՛յ, ո՞ւր ես, Դավի՛թ, Հայոց պահապան,
Քարը պատըռվի — դուրս արի մեյդան։
Քանդած հոր վանքը վոր շինեց նորից,
Ցած իջավ Դավիթ Մարութա տարից,
Ծանդոտած, անկոթ մի շեղբիկ գըտավ,
Գընաց՝ պառավի շաղգամը մըտավ։
Պառավն եր. յեկավ՝ անեծք, աղաղակ.
— Վա՛յ, խելառ Դավիթ, շաղգամի տեղակ
Դու կըրակ ուտես, ցավ ուտես, ասավ,
Քու աչքն աշխարքում մեկնակ ինձ տեսավ.
Կորեկըս արիր գետնին հավասար,
Ես եր մընացել ձըմեռվան պաշար,
Ես եվ կըտրում ես,
Եվ վոնց ապրեմ յես։
Թե կըտրիմ ես դու, աղեղդ առ, գընա,
Քու հոր աշխարքին տիրությունն արա,
Քու հոր դանձը կեր,
Թողել ես անտեր։
Մըսրա թագավոր ղըրկել ե՝ տանի։
— Եվ ինչ ես վըրես բարկանում, նանի,
Եդ ինչ ես ասում, յես չեմ հասկանում,
Մըսրա թագավոր մեր ինչն ե տանում...

— Մըսրա թագավոր մեր ինչն է տանում...
Մըսրա թագավոր քու աչքն է հանում,
Դանդալոշ Դավիթ. ղըրկել է հըրեն,
Ցեկել են Սասմա քաղաքի վըրեն
Բաղին, Կոզբաղին,
Սյուդին, Զարխադին,
Թալան են տալի բովանդակ Սասում.
Քառասուն բեռ վոսկի խարաջ են ուզում,
Քառասուն կույս աղջիկ սիրուն, արմաղան,
Քառասուն կարճ կընիկ, վոր յերկանք աղան,
Քառասուն ել յերկար, վոր ուղտեր բառնան,
Մըսրա Մելիքին ղարավաշ դառնան։
— Ի՞նչ ես, ա՛յ պառավ, ել ինձ անիծում.
Ցուլց տուր մի տեսնեմ՝— վո՞րտեղ են ուզում։
— Վո՞րտեղ են ուզում... Մահըս տանի քեզ.
Դու պետք է են հոր զավակը լինես...
Ցեկել ես՝ ետեղ շաղգամ ես լափում...
Վոսկին Կոզբաղին ձեր տանն է չափում,
Աղջիկներ փըլեկ մարագն են լըցրած։
Շաղգամը թողեց Դավիթ ու գընաց։
Տեսավ՝ Կոզբաղին իրենց տան միջին
Չափում է վոսկին թեղած առաջին,
Սյուդին, Զարխադին պարկերն են բըռնել,
Զենով Ոհանն ել շըլինքը ծըռել,
Կանգնել է հեռու, ձեռները ծոցին։
Տեսավ, աչքերը արնով լըցվեցին։
— Վե՞ր կաց, Կոզբաղին, հեռու կանգնիր դու,
Իմ հոր վոսկին է — յես եմ չափելու։
— Կոզբաղին ասավ, — Ե՛յ, Զենով Ոհան,
Կրտաս — տո՛ւր խարջը ես ոխտը տարվան

Թե չէ՝ կը գընամ, միրուքըս վըկա,
Մըսրա-Մելիքին կը պատմեմ, կը գա,
Ձեր Սասմա յերկիր քար ու քանդ կանի,
Տեղը կը վարի, բոստան կը ցանի։
— Կորե՛ք, անզգամ դուք Մըսրա շըներ,
Բա չե՞ք իմացել դուք Սասմա ծըռեր...
Մեռած եք կարծում դուք մեզ, թե՞ շըվաք,
Կուզեք մեր յերկիր դընեք խարջի տակ...
Բարկացավ Դավիթ, չափը շըպըրտեց,
Տըվավ Կոզբաղնի գըլուխը ջարդեց,
Զափի փըշրանքը պատն անցավ, գընաց,
Մինչև որս ել դեռ գընում է թըռած։
Ու յելան՝ թափած վոսկին թողեցին,
Հայոց աշխարքից փախան գընացին
Բաղին, Կոզբաղին,
Սյուդին, Զարխադին։

XVI

— Վա՛յ, վա՛յ, հորեղբա՛յր, ինչ ասեմ յես քեզ.
Մենք ունենք ետեղ դեղին վոսկու դեզ.
Դու արել ես ինձ քաղաքի ծառան,
Դու թողել ես ինձ ոտարի դըռան...
Հորեղբայրն ասավ. — Ա՛յ խենթ, խելագար,
Վոսկին պահել եմ Մելիքի համար,
Վոր քաղցըր լինի աչքը մեզ վըրա։
Զըտըվիր, հիմի վոր զորք առնի՝ գա,
Սասմա քար ու հող հեղեղի, տանի,
Ո՞վ դեմը կերթա, ո՞վ կըռիվ կանի։
— Դու կաց, հորեղբա՛յր, թող գա, յես
կերթամ,

Կերթամ, յես նըրան պատասխան կըտամ։
Ու մութ մարագի դըռանը զարկեց,
Փակած աղջիկներ հանեց, արձակեց։
— Գընացեք, ասավ, ազատ ապրեցեք,
Սասունցի Դավթին արև խընդրեցեք։

XVII

Եսպես ջարդված, արյունլըվա
Փախան, ընկան հողը Մըսրա
Բաղին, Կողբաղին,
Սյուղին, Զարխաղին։
Մըսրա կանայք հեռվից տեսան,
Հեռվից տեսան, ուրախացան
Ու ծափ տըվին կըտերներին.
— Ցեկան, յեկան, բերին, բերին...
Մեր Կողբաղին գնաց Սասուն,
Կանայք բերավ քառասուն-քառասուն,
Կարմիր կովեր բերավ կըթան՝
Գարնան շինենք յեղ ու չորթան...
Հենց մոտեցան, նըկատեցին,
Ծափ ու խընդում ընդհատեցին,
Քըրքըջացին
Ու կանչեցին.
— Ե՛յ, Կողբաղին մեծաբերան,
Եդ վոնտեղից լերան-լերան,
Լերան-լերան կըգաս փախած,
Հաստ գըլուխըդ կիսից ճըղած։
Են դու չասիր՝ գընամ Սասուն,
Կանայք բերեմ քառասուն-քառասուն,
Քառասուն բեռնով վոսկի հանեմ,

Հայոց յերկիր ավեր անեմ։
Գացիր Սասուն քանց գել գազան,
Ցետ ես գալիս քանց շուն վազան...
Ու Կողբաղին խիստ բարկացավ.
— Սուս կացեք դուք, լըրբեր, ասավ.
Ձեր մարդիկն եք տեսել դուք դեռ,
Դուք չե՞ք տեսել Սասմա ծըռեր։
Սասմա ծըռեր լերան-լերան,
Նետեր ունեն մի-մի գերան.
Սասմա յերկիր քար ու կապան,
Դըժար սարեր, ձոր ու ծապան.
Նըրանց խոտեր — ինչպես կեռ թուր,
Զորք ջարդեցին յերեք հարյուր...
Ասավ ու եկ չառավ դադար,
Վըռազ-վըռազ, գըլխապատառ
Վազեց իրեն թագավորին։
Խընդաց թագվորն իր աթոռին։
— Ապրես ապրես, քաջ Կողբաղին,
Արժե՝ կախեմ յես քու ճըտին
Մեր զուզղունի մեծ նըշանը —
Պարգև քու մեծ հաղթությանը։
Ո՞ւր են, հապա առաջըս բեր
Սասմա վոսկին ու աղջիկներ։
Ասավ Մելիք, ու Կողբաղին
Գըլուխ տըվավ մինչև գետին.
— Ապրած կենաս, մեծ թագավոր,
Զոռով փախա յես ձիավոր,
Վոնց բերեի Սասմա վոսկին։
Մի խենթ ծընվեց Հայոց աղջին,
Վոչ ահ գիտի, վոչ տեր ու մեծ,

Գլուխս եսպես տրվավ, ջարդեց.
«Ձեմ տալ, ասավ, իմ հոր վոսկին,
Ձեմ տալ կանայքն իմ հայ ազգին,
Սասմա յերկիր ձեզ տեղ չկա...
Քու թագավոր, ասավ, թող գա,
Թող գա՝ ինձ հետ կռիվ անի,
Թե ղոչաղ ե՝ զոռով տանի։»
Կատաղեց, փըրփրեց Մըսրա թագավոր.
— Կանչեցեք, ասավ, իմ զորքը բոլոր.
Հազար հազար մարդ նորելուկ մանուկ,
Հազար հազար մարդ անբեխ, անմորուք,
Հազար հազար մարդ բեխը նոր ծըլած,
Հազար հազար մարդ նոր թախտից յելած,
Հազար հազար մարդ թուխ միրուքավոր,
Հազար հազար մարդ սիպտակ ալևոր,
Հազար հազար մարդ, վոր փողեր հընչեն,
Հազար հազար մարդ, վոր թըմբուկ զարկեն...
Կանչեցեք, թող գան, հագնեն զենք, զըրահ,
Կռիվ տի գընամ յես Դավթի վըրա,
Սասունն ավերեմ,
Հեղեղեմ, բերեմ։

XVIII

Եսպես անհամար զորքեր հավաքեց,
Ցեկավ Սասմա դաշտ, բանակը զարկեց
Ու ծանըր նըստեց Մըսրա թագավոր։
Ենքան ահագին բազմությունն են որ
Բաթմանա ջըրին յեկավ ու չոքեց,
Ով յեկավ, խըմեց — դետը ցամաքեց,
Սասմա քաղաքում մընացին ծարավ։

Ձենով Ոհանին զարմանքը տարավ։
Քուրքը ուսն առավ, սարը բարձրացավ.
Սարը բարձրացավ, տեսավ, ինչ տեսավ։
Ճերմակ վըրանից դաշտը ճերմակել,
Ասես՝ են գիշեր ձըմեռը յեկել,
Սպիտակ ձյունով պատել եր Սասուն։
Լեղին ջուր կտրեց, կապ ընկավ լեղուն,
Հարայ կանչելով՝ փախավ տուն ընկավ.
— Վայ, փախեք, յեկավ... հայ, հարայ
յեկավ...
— Ի՞նչը, հորեղբայր, ինչը, ինչն յեկավ...
— Ցանը ու կըրակը Դավթի պլինչն յեկավ։
Մըսրա թագավոր յելել ե, յեկել,
Ցեկել, մեր դաշտին բանակ ե զարկել.
Թիվ կա աստղերին, թիվ չկա զորքին...
Վայ մեր արևին, վայ մեր աշխարքին...
Ցեկ, վոսկին տանենք, աղջիկներ տանենք,
Զոքենք առաջին, պաղատանք անենք,
Գուցե թե գըթա,
Մեզ սըրի չըտա...
— Դու կաց, հորեղբայր, դու դարդ մի անիր.
Գընա, քու ոդում դու հանգիստ քընիր.
Հիմի յես կելնեմ, Սասմա դաշտ կերթամ,
Մըսրա-Մելիքին պատասխան կըտամ։
Ու գընաց Դավիթ ծանոթ պառավին.
— Նանի ջան, ասավ, ժանգոտած ու հին
Ցերկաթի կըտոր, անթարոց, շամփուր,
Ինչ ունես չունես՝ հավաքիր, ինձ տուր,
Մի եշ ել գըտիր, վոր վըրեն նստեմ,
Կռիվ տի գընամ Մըսրա զորքի դեմ։

— Վա՛յ, Դավիթ, ասավ, մահս տանի՛ քեզ։
Դուռ պետք է են հոր զավակը լինես...
Ո՞ւր է քու հոր հըրեղեն ձին,
Ո՞ւր է քու հոր Թուր Կեծակին,
Ո՞ւր է քու հոր գոտին վոսկի,
Խաչ պատրաստին իր աջ բազկի,
Ո՞ւր է քու հոր ծալ-ծալ կապեն,
Գուրզը պողպատ, թամբ սաղափեն,
Վոր յեկել ես, ա՛յ խենթ ու ծուռ,
Ինձնից կուզես եշ ու շամփուր...
— Ի՞նչ ես, նանի, էլ բարկանում,
Զահել եմ յես, չեմ խմանում.
Ցես քեզնից եմ լըսում եսոր.
Զենք ու զըրահն ուր են իմ հոր։
— Հորեղբորըդ գընա հարցուր.
Ո՞ւր են, ասա, հանկիր, բեր, տուր։
Բան է, թե վոր չըտա սիրով,
Աչքը հանիր՝ խըլիր զոռով։

XIX

Դավիթ գընաց Ոհանի մոտ.
— Ե՛յ հորեղբայր, իմ հերահոտ,
Տուր ինձ իմ հոր հըրեղեն ձին,
Տուր ինձ իմ հոր Թուր Կեծակին,
Տուր ինձ իմ հոր գոտին վոսկի,
Խաչ պատրաստին իր աջ բազկի,
Տուր ինձ իմ հոր ծալ-ծալ կապեն,
Գուրզը պողպատ, թամբ սաղափեն...
— Քու հոր մահվան տարուց — որից
Դուրս չեմ հանել ձին ախուրից,

Վոչ սընդուկից Թուր-Կեծակին,
Զըրահ շապիկ, վոսկի գոտին...
Ինձ թող, ամեն, մի սպանիր,
Կուզես — հըրեն, գընա հանիր։

XX

Հագավ Դավիթ զենքն ու զըրահ,
Կապեց գոտին, Թուր-Կեծակին,
Խաչն էլ իր հաղթ բազկի վըրա,
Ցելավ, հեծավ Առյուծ հոր ձին,
Կանչեց, իր ձին ասպատակեց։
Զենով Ոհան լալով յերգեց.
— Ափսո՛ս, հազար ափսոս հըրեղեն մեր ձին,
Ա՜խ, հըրեղեն մեր ձին.
Ափսո՛ս, հազար ափսոս մեր վոսկի գոտին,
Ա՜խ, մեր վոսկի գոտին.
Ափսո՛ս, թանկ կապեն, վոր հագին տարավ,
Ա՜խ, վոր հագին տարավ...

Դավիթ բարկացավ,
Ձին քշեց, դարձավ,
Ոհանը վախեց,
Իր յերգը փոխեց.
«Ափսո՛ս, նորելուկ Դավիթըս կորավ,
Ա՜խ, Դավիթըս կորավ։»

Ես վոր իմացավ,
Դավիթ մեղմացավ,
Ինչավ, Ոհանի ձեռքը համբուրեց։
Զենով Ոհանն էլ, ինչպես հալը ու մեծ,

Որոնեց, խըրատեց նըրան հայրաբար,
Դեպի Սասմա դաշտ դըրավ ճանապարհ։

XXI

Սասունցի Դավթին ուներ մի քեռի,
Անունը Թորոս, ահեղ ածդահա։
Սա յել իմացավ համբավը կըռվի,
Մի բարդի ուսին գալիս է ահա։
Գալիս է՝ հեռվից բարձըր գոռալով.
— Ի՞նչ եք վեր յեկել ես դաշտի միջում,
Քանի գըլխանի մարդիկ եք կամ ո՞վ,
Սասունցի Դավթին վոր չեք ճանաչում...
Բա չե՞ք իմանում, վոր ետեղ է նա
Գալու՝ խաղացնի իր ձին թեավոր.
Զըքվեցե՛ք, հիմի ուր վոր է՝ կըգա,
Ցեկել եմ սըրբեմ մեյդանը ետոր։

Ասավ ու քաշեց իր ուսի բարդին,
Սըրբեց բանակից մի քըսան վըրան...
Դավիթն էլ ահա սարի գագաթին
Կանգնած՝ գոռում է վիշապի նըման.

— Ով քընած եք՝ արթուն կացե՛ք,
Ով արթուն եք՝ յելե՛ք, կեցե՛ք,
Ով կեցել եք՝ զենք կապեցե՛ք,
Զենք եք կապել՝ ձի թամբեցե՛ք,
Ձի յեք թամբել՝ յելե՛ք, հեծե՛ք.
Հետո՞ չասեք՝ թե մենք քընած —
Դավիթ գող-գող յեկավ, գընաց...

Ետպես կանչեց, ասպանդակեց,
Ու, ինչ ամպից կեծակ զարկի,
Մըսրա զորքի մեջ տեղ զարկեց,
Շողացնելով Թուր-կեծակին։

Ջարդեց, փըշրեց մինչև կեսոր.
Կեսոր արինն յելավ հեղեղ,
Քըշեց, տարավ հազարավոր
Մարդ ու դիակ վողջ միատեղ։

Կար զորքի մեջ մի ալեոր,
Աշխարք տեսած ու բանագետ.
— Տըղերք, ասավ, ճամբա տըվեք,
Գընամ խոսեմ յես Դավթի հետ։

Գընաց, կանգնեց Դավթի առաջ,
Ետպես խոսեց են ծերունին.
— Դալար կենա կուռըդ, ով քաջ,
Սուրըդ կըտրուկ միշտ քու ձեռին։

Մի ծերունուս խոսքին մըտիկ,
Տես, քու խելքը ինչ է կըտրում։
Ի՞նչ են արել քեզ ես մարդիկ,
Հեր ես սըրանց դու կոտորում։

Ամեն մինը մի մոր վորդի,
Ամեն մինը մի տան ճըրագ,
Վորը կինն է թողել ենտեղ
Աչքը ճամբին, խեղճ ու կըրակ,

Վորը մի տուն լիք մանուկներ,
Վորը ծընող աղքատ ու ծեր,

Վորը լացով, քողն յերեսին
Նորապըսակ ջահել հարսին...

Թագավորը զոռով-թըրով
Հավաքել է, եստեղ բերել։
Խեղճ մարդիկ ենք՝ պակաս որով,
Մենք քեզ վընաս ինչ ենք արել։

Թագավորն է քու թըշնամին,
Կըռիվ ունես — իր հետ արա,
Հեր ես քաշում Թուր-կեծակին
Ես անճարակ խավխի վըրա։

— Լավ ես ասում դու, ծերունի,
Ասավ Դավիթն ալևորին,
Բայց թագավորն ուր է հիմի,
Վոր սև կապեմ նըրա որին։

— Մեծ վըրանում քընած է նա,
Ե՞ն, վոր միջից ծուխը կելնի.
Են ծուխն էլ հո ծուխ չի վոր կա,
Գոլորշին է իր բերանի։

Ասին. դեպի մեծ վըրանը
Ասպանդակեց Դավիթն իր ձին,
Քըշեց, գընաց ու դըռանը
Գոռաց կանգնած արաբներին.

— Ո՞ւր է, ասավ, ինչ է կորել,
Դուրս կանչեցեք, գա ասպարեզ,
Թե մահ չունի՝ մահ եմ բերել,
Գըրող չունի՝ գըրողն եմ ես...

— Մելիքն, ասին, քուն է մըտել,
Ախտը որով պետք է քընի.
Ցերեք որն է դեռ անցկացել,
Զորս որ էլ կա, քունը առնի։

— Ինչ, բերել է աղքատ ու խեղճ
Խավխին լըցրել ծոցը արյունի,
Ինքը մըտել վըրանի մեջ՝
Ախտը որով հանգիստ քընի...

Քընել-մընել չեմ հասկանում,
Վեր կացրեք շուտ, դուրս գա մեյդան,
Ենպես դըրան յես քընացնեմ,
Վոր չը զարթնի էլ հավիտյան։

Ցելան՝ մարդիկ ճարահատված
Շամփուր դըրին թեժ կըրակին
Ու զարկեցին խոր մըրափած
Մըսրա-Մելքի բաց կըրնակին։

— Ո՞ֆ, էլ հանգիստ քուն չունի մարդ
Ես անիծված լըվի ձեռից,
Խոր մըրընչաց հըսկան հանդարտ
Ու շուռ յեկավ, քընեց նորից։

Ցելան, բերին մեծ դութանի
Խոփը դըրին թեժ կըրակին,
Ու կաս-կարմիր, կեծկըծալի,
Շիկնած տըվին մերկ թիկունքին։

— Ո՞ֆ, էլ հանգիստ քուն չունի մարդ
Ես անիրավ մոծակներից.

Աչքը բացավ հրսկան հանդարտ,
Ուզում եր յետ քընել նորից,

Տեսավ՝ Դավթին։ Գլուխն ահեղ
Վեր բարձրացրեց մըռընչալով,
Փըչեց վըրեն, վոր թըռցընի
Են ածղըհին մի փըչելով։

Տեսավ, տեղից ժաժ չի գալի,
Զարմանքն ու ահ պատեց հոգին։
Արնոտ աչքերն ըսպառնալի
Հառեց խոժոռ Դավթի աչքին։

Նայեց թե չե, զգաց՝ իր մեջ
Տասը գոմշի ուժ պակասեց։
Պառկած տեղից վրա նստեց
Ու ժպտալով հետը խոսեց.

— Բարով, Դավիթ, հոգնած ես դեռ.
Ցեկ, մի նստիր, խոսենք կարգին,
Հետո դարձյալ կըռիվ կանենք,
Ցեթե կըռիվ կուզես կըրկին...

Իր վըրանում բըռնակալը
Քառասուն գազ խոր հոր եր փորել,
Ցանցով փակել մութ բերանը,
Վըրեն փափուկ խալի փըռել։

Ում վոր հաղթել չեր կարենում,
Շողոմելով կանչում եր նա,
Նըստեցնում եր իր վըրանում
Են կորստյան հորի վրա։

Իջավ Դավիթ ձիուցը ցած,
Գընաց նըստեց... ընկավ հորը։
— Հա, հա, հա, հա, քահ-քահ խընդաց
Մըսրա դաժան թագավորը։

— Դե, թող հիմի գընա՝ խավար
Հորում փըթի, ենքան մընա։
Ու ահագին մի ջաղացքար
Բերավ, դըրավ հորի վըրա։

XXII

Բընեց են գիշեր Ջենով Ոհանը։
Գիշերն յերազում յերևաց ծերին՝
Մըսրա յերկընքում արև ճառագած,
Սև ամպ եր պատել Սասմա սարերին։

Սաստիկ վախեցած վեր թըռավ տեղից։
— Վայ, կընիկ, ասավ, մի ճըրագ արա,
Գընաց մեր անփորձ Դավիթը ձեռից,
Սև ամպ եր իջել Սասունի վըրա։

— Հողեմ գըլուխդ, ասավ կընիկը,
Ո՞վ գիտի՝ Դավիթն ուր է քեֆ անում...
Դու յել քեզ համար քու տանը քընած՝
Ուրիշի համար յերազ ես տեսնում։

Քընեց Ոհանը։ Վերկացավ դարձյալ.
— Կընիկ, Դավիթը նեղ տեղն է ընկած.
Մըսրա վառ աստղը շողում եր պայծառ,
Մեր աստղը հիվանդ ցոլքում դալկացած։

— Ի՞նչ յեղավ քեզ, մարդ, գիշերվան կիսին.
Բարկացավ վրան կընիկն աղմուկով։
Խաչ քաշեց եվ յետ Ոհանն յերեսին,
Շուռ յեկավ, քընեց խրոռված հոգով։

Մի ուրիշ պատկեր ավելի ահեղ.
Տեսավ՝ յերկընքի բարձրը կամարում
Վառվում եր Մըսրա աստղը փառահեղ,
Սասմա աստղիկը սուզվեց խավարում։

Զարթնեց վախեցած։ — Տունըդ քանդվի, կլի՜ն,
Ցես վռնց լըսեցի քու եդ կարճ խելքին.
Կորավ մեն-մենակ մեր ջահիլն անտեր.
Վեր կաց, շուտ արա, զենքերըս մի բեր...

XXIII

Ցելավ Ոհան, գոմը մըտավ,
Զարկեց ճերմակ ձիու մեջքին.
— Ե՛յ, ճերմակ ձի, մինչ լեբը, ասավ,
Կըհասցընես Դավթի կըռվին։

«Մինչև լուս կըհասցնեմ.»
Ու ձին տըվավ փորը գետին։
— Մեջքդ կոտրի, լուսն ի՞նչ անեմ.
Լաշին հասնեմ յես թե նաշին։

Կարմիր ձիու մեջքին զարկեց.
Սա եվ յերետ փորը գետին։
— Ջան կարմիր ձի, մինչ լեբը դու ինձ
Կըհասցընես Դավթի կըռվին։

«Մի ժամի մեջ, կարմիրն ասավ,
Կըհասցընեմ Դավթի կըռվին։»
— Լեղի դառնա, սև մահ ու ցավ,
Ինչ տըվել եմ քեզ՝ են գարին։

Հերթը յեկավ սևին հասավ.
Գետին չերետ փորը սև ձին։
— Ե՛յ, ջան Սևուկ, մինչ լեբը, ասավ,
Կըհասցընես Դավթի կըռվին։

«Ցեթե ամուր մեջքիս մընաս,
Վոտըդ դընես ասպանդակին,
Մինչև մեկել վոտըդ շուռ տաս,
Կըհասցընեմ», ասավ սև ձին։

XXIV

Սև ձին քաշեց Ջենով Ոհան,
Ձախը դըրավ ասպանդակին,
Աջն եվ մինչև շուռ տար վըրան,
Կանգնեց Սասմա սարի գըլխին։

Տեսավ՝ Դավթի նըժույգն անտեր
Սարերն ընկած խըրխընջալով,
Ներքև Մըսրա զորքը չոքած,
Ինչպես անծեր ծըփուն մի ծով։

Ոխտը գոմշի կաշի հագավ,
Վոր չըպատռի իրեն զոռից,
Կանգնեց Ոհան, ամպի նըման
Գոռաց Սասմա սարի ծերից։

— Հէյ-հէյ Դավիթ, վո՞ւրտեղ ես դու.
Հիշի՞ր խաչը քո աջ բազկի,
Սուրբ Տիրամոր անունը տո՛ւր,
Լռեսը դուրս յե՛կ արեգակի։

Ձենը գընաց դըմդըմբալով՝
Դավթի ականջն ընկավ հորում.
— Հայ-հա՛յ, ասավ, հորեղբայրս ե.
Սասմա սարից ինձ ե գոռում։

Ո՞վ Մարութա Աստվածածին,
Խաչ պատրաստի իմ աջ բազկի,
Ձեզ եմ կանչել ես նեղ ժամին...
Կանչեց, տեղից յելավ վոտքի,

Ենպես զարկեց ջաղացքարին՝
Քարը յեղավ հաղար կըտոր,
Կըտորները յերկինք թըռան,
Ու գնում են մինչև եսոր։

Ցելավ հորից, կանգնեց ահեղ։
Սարսափ կալավ դև Մելիքին։
— Դավիթ ախպեր, յե՛կ դեռ եստեղ,
Սեղան նըստե՛նք, խոսենք կարգի՛ն...

— Ել չեմ նըստիլ յես քու հացին,
Դու տըմարդի, վախկոտ ու նենգ.
Շո՛ւտ, զենքըդ առ, հեծիր քու ձին,
Դուրս յե՛կ մեյդան, կըռիվ անենք։

— Կըռիվ անենք, ասավ Մելիք
Իմն ե միայն զարկն առաջին։

— Քոնն ե, զարկիր, կանչեց Դավիթ
Գընաց, կեցավ դաշտի միջին։

Ցելավ, կանգնեց Մըսրա-Մելիք,
Իր գուրզն առավ, հեծավ իր ձին,
Քըշեց, գընաց մինչ Դիարբեքիր
Ու ենտեղից յեկավ կըրկին։

Ցերեք հազար լիդը եր քաշում
Հըսկայական իր մըկունդը.
Ցեկավ, զարկեց. կորավ փոշում
Ու յերերաց յերկրի գունդը։

— Ցերկիր քանդվեց կամ ժաժք յեղավ,
Ասին մարդիկ շատ աշխարքում։
— Չե՛, ասացին, արնի ծարավ
Հըսկաներն են իրար զարկում։

— Մեռավ Դավիթ ես մի զարկից,
Ասավ Մելիք իրեն զորքին։
— Կենդանի յե՛մ, ամպի տակից
Գոռաց Դավիթ Մըսրա-Մելքին։

— Հայ-հա՛յ, մոտիկ տեղից յեկա,
Տես, վո՞ւրտեղից հիմի կըգամ։
Ու վերկացավ, կանգնեց հըսկան,
Իր ձին հեծավ յերկրորդ անգամ։

Ցերկրորդ անգամ քշեց Հալաբ
Ու բաց թողեց ձին Հալաբից.
Բուք վեր կացավ, տեղ ու տարափ,
Արար աշխարհ դողաց թափից։

Ցեկավ, զարկեց· զարկի ձենից
Մոտիկ մարդիկ վողջ խըլացան։
— Գընաց Դավիթ Սասմա տանից,
Գուժեց գոռող Մըսրա արքան։

— Կենդանի՞ յեմ, կանչեց Դավիթ,
Մին ել արի՞ — հերթն ինձ հասավ,
— Հայ-հայ, մոտիկ տեղից յեկա,
Կանչեց Մելիք ու վեր կացավ։

Ցերրորդ անգամ հեծավ իր ձին,
Գընաց մինչև հողը Մըսրա,
Ու ենտեղից, գուրզը ձեռին
Քըշեց, յեկավ Դավթի վըրա։

Ցեկավ, զարկեց բոլոր ուժով,
Ծանըր զարկով հըսկայական.
Փոշին յելավ Սասմա դաշտից,
Բըռնեց յերեսն արեգական։

Ցերեք գիշեր ու յերեք որ
Փոշին կանգնեց ամպի նըման,
Ցերեք գիշեր ու յերեք որ
Բոթը տըվին Դավթի մահվան։

Ցերբ վոր անցավ յերեք որը,
Են ամպի պես կանգնած փոշում
Կանգնեց Դավիթ, ինչպես սարը,
Գըրգուռ սարը մեգ-մըշուշում։

— Մելիք, ասավ, ձեմն ե հերթը։
Սարսափ կալավ գոռ Մելիքին,

Մահվան դողը ընկավ սիրտը
Ու տապ արավ գոռող հոգին։

Գընաց խորունկ մի հոր փորեց,
Իջավ, մըտավ վիհն են խավար,
Վերեն քաշեց քառասուն կաշի
Ու քառասուն ջաղացի քար։

Մըռընչալով յելավ տեղից
Են առյուծի առյուծ վորդին,
Իր ձին հեծավ ու փոթորկեց,
Խաղաց, շողաց Թուր-կեծակին։

Առաջ վազեց մազերն արձակ
Մելքի պառավ մայրը ջադու.
— Դավի՞թ, մազըս ա՛ռ վոտիդ տակ,
Եդ մի զարկը ինձ բաշխիր դու։

Ցերկրորդ անգամ Թուրը քաշեց.
Ես անգամ ել յեկավ քուրը.
— Դավի՞թ, յեթե կուզես, կանչեց,
Իմ սըրտին զարկ յերկրորդ Թուրը...

Վերջին զարկի ժամը հասավ,
Ցելավ Դավիթ յերրորդ անգամ.
— Ես մի զարկն ու Աստված, ասավ,
Ել մարդ չըգա, պետք ե վոր տամ։

Ես անգամ ել քեռի Թորոսն
Առաջ յեկավ ձեռն արած դեմ.
— Դավի՞թ, ասավ, լավ իմանաս,
Կըշեռք պիտի գըցեմ, քաշեմ։

Մսրամելքի յերկու կեսը
Թե հավասար չեկան իրար,
Եվ չտեսնես իմ յերեսը,
Դավիթ չես եվ դու ինձ համար։

Ասավ, յելավ ու փոթորկեց,
Թրռավ, ցոլաց Դավթի հուր ձին,
Ձին փոթորկեց, փայլատակեց
Ու ցած իջավ Թուր-Կեծակին։

Անցավ քառասուն գոմշի կաշին,
Անցավ քառասուն քարերը ցած,
Միջից կըտրեց ժանտ հըրեշին,
Ոխտը գազ եվ դենը գընաց։

— Կենդանի՛ յես, մին եվ արի՛,
Գոռաց Մելիք հորի տակից։
Դավիթ լսեց, շատ զարմացավ
Իրեն զարկից, Թուր-Կեծակից...

— Մելիք, ասավ, թափ տուր մի քեզ։
Ու թափ տըվավ Մելիքն իրեն,
Միջից յեղավ ճիշտ յերկու կես,
Մեկն ընկավ դեսն ու մյուսը՝ դեն։

Ես վոր տեսավ Մսրա բանակ,
Զուր կըտըրվեց ահ ու վախից։
Դավիթ կանչեց. — Մի՛ վախենաք,
Ականջ արեք հալա դեռ ինձ։

Դուք ըռանչալը մարդիկ, ասավ,
Զուրկ ու խավար, քաղցած ու մերկ,

Հաղար ու մի կըրակ ու ցավ,
Հաղար ու մի հոգսեր ունեք։

Ի՞նչ եք առել նետ ու աղեղ,
Ցեկել թափել ոտար դաշտեր.
Չե՞ վոր մենք եվ ունենք տուն-տեղ,
Մենք եվ ունենք մանուկ ու ծեր...

Զանձրացե՞լ եք խաղաղ ու հաշտ
Հողագործի որ ու կյանքից,
Թե՞ զըզվել եք ձեր հանդ ու դաշտ,
Ձեր հունձ ու փունջ, վար ու ցանքից...

Դարձեք յեկած ճանապարհով
Ձեր հայրենի հողը Մըսրա.
Բայց թե մին եվ դենք ու զոռով
Վեր եք կացել դուք մեզ վըրա,

Հորում լինեն քառասուն գազ խոր
Թե ջաղացի քարի տակին, —
Կելնեն ձեր դեմ, ինչպես ասոր,
Սասմա Դավիթ, Թուր-Կեծակին։

Են ժամանակ Աստված գլուխ,
Ով մեզանից կըլնի փոշման.
Մենք, վոր կելնենք ահեղ մարտի,
Թե դուք, վոր մեզ արիք դուշման...

ՊԵՏ. ԿԱՆ. ԿՈՄ. ԴԱՐՄԱՆ
ՀՍՍ ԵՐԵՎ.
ZUUՌ-Арм ССР
Ա. ԻՄ. Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆ
ՄՍԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0349113

3 2398
84-И
Са 600

Գն 20 կ.
Կազմը 15 կ.

1
2

ՕՎ. ՏՈՒՄԱՆՅԱՆ
Давид Сасунский
ГИЗ ССР Армении Эривань